

## ԴԱԻԻԹ ԱՆՑԱՂԹ

Դաւիթ Անյաղթը \*) կախէթիայից է Նելս, մի ազնուականի որդի, Դեռ պատանի, թողնում է հայրենական տունը և գնում Անատոլի քաղաքը ուսում առնելու Այստեղ տասերկու աշակերտ պատրաստում են զնալու Սէյրանու քաղաքը, իրենց ուսումը շարունակելու հետո զնալու նախընթաց օրը դրանցից մինը հիւանդանում է, միւս տասնեւեկը զնում են: Դասիթը հետառում է դրանց, կամենալով ինքն էլ նրանց հետ միասին զնալ ուսում առնելու մանապարհին Դաւիթը մօսենում է նրանց և ինքում, որ հիւանդացած ընկերի փոխարին իրեն տանին հետները: Սրանք համաձայնում են և միասին շարունակում նաևնապարհը: Երբ համում են Սէյրանու քաղաքը, դիմում են թագաւորին և նրա հրամանով ընդունում դպրոցամ: Մի առժամանակից յետոյ սրանը այլքոն են յառաջադիմում, որ կրկն ինքրում են թագաւորին, և աեզափոխուում Սողոմոնի դպրոցը: Այստեղ պատշաճամբում մի սիւն կար կանգնեցրած, ոս երեսուն և երկու կողմին ունէր, որոնց վրայ զրուած էր երեսուն և երկու հազարեան զիտութիւնը: Սրանց ուսուցիչն ուսուցանում էր մի այնպիսի փոքրիկ սենեակում, ուր միմիայն տասերկու մարդու տեղ կար, ուստի և երբ ուսուցիչը զալիս էր, աշակերտներից մինը ստիպուած էր լինում զուրս զնալու: Տասնեւեկը ընկերեներից շատ մտերիմ էին միմնանց հետ, այնպէս որ միշտ Դաւիթին էին ստիպում հետուալ զամարանից: Դաւիթին անմունջ զուրս էր զալիս և փոխանակ ժամանակին ապարդիմ կորցնելու՝ կարգում էր սեան վերայ գրածները:

Մի քանի ժամանակից յետոյ քննութիւն է լինում, Դաւիթը ամենից լաւ է պատասխանում և միւնչեթի վրայ խալֆա կարգում, նրանց սովորեցնում: Մի օր Դաւիթը սովորեցնում է իւր աշակերտներին, որ ամեն տեղ ասեն, թէ անյազթ է մեր Դաւիթ փի-

<sup>\*)</sup> Պատմել է ինձ Այգեհասացի 90 ապրենան Օխենանց Պառը:

լիսոփան։ Այս բառը են այդ տեղի երկու նշանաւոր փիլիսոփաները, զիմում են թագուհուն և յարտնում, թէ Անատոլիայից եկած աշակերտաները տառմ են, թէ անյաղթ է մեր Դաւիթ փիլիսոփան, այդ թվագիտ է, որ մնաք լոկ փիլիսոփայ կոչուենք, իսկ նա Անյաղթ կոչուիր Թագուհին պատասխանում է, թէ ևս կը քննեմ նրա զիտութիւնը։ Հետևեալ կիրակի օրը թագուհին հրաւիրում է ճաշի Դաւիթի ուսուցչին իւր տասերկու աշակերտներով, որոնց մէջ էր և Դաւիթը։ Հրաւիրում են նաև այդ երկու բողոքող փիլիսոփաները։

Ճաշից յետոյ փիլիսոփաներից մինը հարցնում է այս աշակերտներից, թէ մի բան էլ է սովորել են։ Սրանք պատասխանում են, թէ ևս, մի քիչ բան զիան։ Ապա մի մի բան զրեցէք, առաջարկում է միւս փիլիսոփան։ Սրանք սկսում են մի մի բան զրել, իսկ Դաւիթին անմիջապէս մի շրջան է քաշում և տալիս թագուհուն։ Սա նայում է շրջանին և բացականշում։ Յիրաւի որ Անյաղթ է Դաւիթը։ Երկու փիլիսոփան ևեանում են, բայց ձայն չեն հանում։ Երբ աշակերտները զնում են, այս երկու փիլիսոփան բողոքում են, թէ Դաւիթի թնձ զրեց, որ թագուհին նրան անյաղթ հայակեց։ Թագուհին պատասխանում է, թէ նա անյաղթ է, որպէսնուն մի շրջանակ գծելով, նա ձեր անմիտ առաջարկին պատասխանեց, թէ աշխարհի որ բանի մասին կամենում էր որ զրեմ։ Փիլիսոփաները վշացած հեռանում են։ Այնուհետև սրանք իրենց կողմն են զրաւում թագուհրի աղջկան, որ իմաստունի հոչակ ունէր, և նրա հետ միասին աշխատում են Դաւիթ Անյաղթին խայտառակիլու։ Մի անգամ նրան միայն ճաշի են հրաւիրում, սասարկ հարրեցնում, շրերը հանում և մի կողովի մէջ զրած կախում քաղաքի պարապաց գէպի ձորը։ Յետոյ որոնում են նրա շորերի մէջ նրա իմաստութեան թիւմամբ, բայց չեն գտնում\*)։

Երբ Դաւիթը ուշքի է գալիս՝ հանում է իւր ականջի միջից իւր իմաստութեան թիւմամբ և նրա շնորհի թաշում, ագաւում։ Ապա զիր է անում և քաղաքի կրակը վերջացնում Այլ ևս ամբողջ քաղաքում ոչ մի ճրագ, ոչ մի կրակ չի վառում։ Ո՞չ ոք չի կարողանում ոչ մի խաւարը լուսաւորել և ոչ մի որևէ բան եփել, տարացնել։ Յուսահատութիւնը պատում է քաղաքին։ Այս ժամանակ Դաւիթ Անյաղթը պատասխան է իւր աշակերտներին, որ լուր

\*) Մի վարիանտ ուրագէ է պատմում։ Հարքեցներոց յետոյ նստեցնում են իշխ վրայ և քաղաքում մտն ածում, բշտկելով թէ ով է Դաստիարակները մտնեն և թշում են Դաւիթի երեխն։ Վերջապէս պատահում են Դաւիթի աշակերտները, որոնց ծեծում են որ մտն ածուներին և իւրում նրանցից Դաւիթին, առնենմ իրենց ժողով, ինունմ և երբ ուշքի է զալիս, պատմում են նրան եղեւթիւնը։

տարածեն, թէ կրակը թագաւորի աղջկայ փորն է: Ժողովուրդը յուզում է, ուզում է գահընկէց անել թագաւորին, պահանջում է, որ իրեն յանձնէ աղջկան: Թագաւորը ճարանասուած յանձնում է իւր աղջկան ամբոխի ձեռքը, իսկ ու Դաւիթ Անյաղթի աշակերտների խորհրդով տանում կապում է պարսպի այն մասում, ուր կապել էին Դաւիթ Անյաղթին: Ապա մէկ մէկ մօտենում էին և մօմը կրիսում նրա փորը, հանում էին արդէն վասուած:

Թագաւորի աղջկան այդպէս խայտառակելուց յետոյ Դաւիթ Անյաղթը այլ ևս չի ուզում այդ քաղաքում մնալ և որպէսզի գնէ մինին մի մեծ բարերարութիւն արած լինի, զրում է մի թղթի վրայ, թէ ով մի փոս փորի, ունեցած չունեցածը մէջը ածէ, չորս կողմից փութոսով փէտ, կը հալչի՝ ուկի կը դառնայ և այս թուղթը թողնելով՝ ինքը գնում, հեռանում է:

Մի հարուստ մարդ գանում է այս թուղթը, իսկոյն մի փոս փորել տալիս, իւր ունեցած չունեցածը և գեռ մի քանի բան էլ դրկիցներից առնում, լցնում է մէջը, կրակ տալիս: Ամէն բան վառդում է և ոսկոս փոխանակ մոխիր դառնում: Այս մարդը կատարած քաշ է անում Դաւիթ Անյաղթի պատկերը իւր անազին հարստութիւնից մնացած միակ բաղնիսի դռան վրայ և յայտնում, որ լողացողների միակ վճարը պիտի լինի թքել պատկերի երեսին:

Դաւիթ Անյաղթը գնում է Բաղդադ և թագաւորի միակ աղջկը, որ գահաժառանգ էր, կութեան ուզում: Թագաւորը հարցնում է նրան, թէ ով է:

—Ես մի փիլիսոփայ եմ, մեծ տան զաւակ:

—Գիտութիւնդ լինչ է:

—Այս, որ եթէ ուզես, բեզ երկինք կը տանեմ, ման կածեմ և յետ կը բերեմ:

Թագաւորը տեսնում է որ ճիշտ է ասում, հրամայում է փողերը փչել և հարսանիցն սկսել:

Պակւում են: Նա զառնում է թագաւորի փեսայ և յետոյ՝ թագաւոր, և այս է պատճառը, որ այսունեան Բաղդադի թագաւորները՝ Դաւիթի խալֆա տիտղոսով՝ խալիֆա են կոչւում:

Անցնում է մի ժամանակ, Դաւիթ Անյաղթը նկատում է, որ իւր մարմինը թաց է լինում, մտածում, գառնում ասում է կը նոյնը. Երկի իմ պատկերին թքում են, պէտք է մի ճար անել:

Վեր է կենում, զնում, Փնում է, գնում, վերջապէս զնում համնում է միր գիտեցած բաղնիսին ներս է մտնում, տեսնում է, որ բաղնիսպանը նստած օխ է անում, հէնց որ մինը լողանալուց յետոյ թքում է գռան վերայ կտի արած պատկերին և հեռանում: Մօտենում է բաղնիսպանին և հարցնում, թէ ինչի՞ են

թքում այդ պատկերի վերալ, Բաղնիսպանը պատասխանում է, թէ զա մի անպիտան, խարերայ փիլիսոփայի պատկեր է, որի խօսքին հաւատալով իւր բոլոր հարստութիւնը ածել է մի փոսի մէջ և վառել:

—Զի՞ կարելի ցոյց տաս ինձ այդ փոսը, հարցնում է Դաւիթ Անյաղթը:

Նա տանում ցոյց է տալիս: Դաւիթն ասում է. «Այս փուշոը հանիր այստեղից, այնտեղ զիր, այն մասը այս ինչ տեղը ամբացրու, ուրիշ բարեկամ չունի՞ս՝ թող բերեն իրեր լցնեն»:

—Զէ, այլ ևս ոչ մի բարեկամ չშնաց ինձ, պատասխանում է բաղնիսպանը:

Վերջապէս նորից փչել է տալիս, մի իր էլ ինքն է մէջը ձգում և անյայտանում է: Մի քիչ յետոյ ոսկին սկսում է վազել: Բաղնիսպանը հասկանում է, թէ ով էր այդ մարդը և թէ ինչուն է իւր սխալը, վազում վերցնում է բազմնիսի գոնից նրա պատկերը, համբուրում, դնում ճակատին, վերցնում՝ պահում ծոցում:

Դաւիթ Անյաղթը վերադառնալով Բաղզատ, յաջորդում է իւր անհերոջը Այս ժամանակ մեծ պատերազմ է ծագում պարսից դէմ և Դաւիթ Անյաղթը իւր հարազիտութեամբ ջարդում և քըշում է պարսիկներին մինչև թէրան:

b. l.

